

Ահա թառանչ, ահա և լաց հոգիներու,
Որոնց քայլերը կը հըպին կոյր անդունդին,
Ուր կը հսկէ դարանակալ, որպէս ուրու,
Հափափիչ մահն և խուլ կորուստը խաւարին:
Տըգիտութիւն, անկում, կապանք՝ հայու բաժին,
Նայուածքիդ տակ լուսաճաճանչ կը փըշրըւին:

Անցար ձորէ ձոր, լեռնէ լեռ զերդ առաքեալ,
Շրթունքիդ վրայ ծաղկեցնելով ժըպիտ ու սէր,
Որպէս ձեռքիդ ցուպ՝ լոյսի դօշն աստուածընկալ,
Որուն վերեւ երկինք մ'ամբողջ կը ծածանէր,
Եւ աչքերէդ, որ զոյգ հնոցն էր վըճիտ կեանքի,
Հոգիդ մեղի կը բաշխէիր անչափելի:

Ճակտիդ ներքեւ, որ համբուրուած մեծ Մաշթոցէն,
Ճառագայթեց ջահոյն անշէջ Գաղափարի,
Ծընունդ առին հայկեան գիրեր՝ մեր փառքն անդէն,
Եւ դու եղար ճարտարապետ մշտաբարի՝
Որ ժողովուրդ մը կը կանգնէ գերբուկներէն՝
Ձերդ ոսկորներ կեանքի կոշով մեծ Մարգարէն:

Ո՛չ, գիտաւոր սը լոկ չեղար դուն վաղափուր,
Այլ արեգակն յաւետահրաշ մեր երկնքին,
Որ շուրջդ առած գօտի՝ որդիքըդ բազմահոյլ
Իբր աստղերու պարն ազնուական ու վեհածին,
Կը հսկես միշտ քու տաճարին մեծակառոյց,
Անձրեւելով աստուածօրէն շընորհք ու լոյս:

ԱՐՄԱՒԻՐԵԱՆ

Ս. ԵՓՐԵՄ ԵՒ ԻՐ ՃԱՌԸ

ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Ի՞նչպէս չապշի՝ չհիանայ մարդ, երբ
մտածէ որ Միջագետքի մէջ ծնած ասորի
մը, հեթանոս քուրմի դաւակ, — տասնեւ-
ութ տարեկան հասակին հաղիւ քրիստո-
նեայ դարձած, երբե՛ք բարձրագոյն վար-
ժարաններ չյաճախած, ո՛չ Աթէնք, ո՛չ Ա-
ղեքսանդրիա եւ ո՛չ ալ Անտիոք, — անա-
պատներու եւ քարայրներու մէջ անցու-
ցած բոլոր կեանքը, լոկ սարկաւազ մը,
ո՛չ միայն ասորի Եկեղեցւոյն գերագոյն
Վարդապետը կ'ըլլայ, այլ նաեւ բովան-
դակ քրիստոնեայ Եկեղեցւոյն մեծագոյն
Վարդապետներուն կարգը կը դասուի: Եւ
ան՝ ի՞նչ չէր արդէն: Խորունկ աստուա-
ծաբան մը, հզօր պերճախօս մը, անպար-
տելի ջատագով մը հաւատքին, քերթող
մը, երաժիշտ մը, գերադանց սուրբ մը,
հայր մը: Ահա՛ Ս. Եփրեմ Խուրին ասորին:

Այս մեծ ու անմահ Վարդապետը ծնաւ
Մծրին քաղաքը 306-307 թուականին, երբ
հաղիւ տարի մը կ'ընէր՝ որ Կոստանդիա-
նոս կայսերական դահլ բարձրացած էր:
Անոր անուն դրուեցաւ Եփրեմ, որ անե-
ցուն կամ բեղմնաւոր կը նշանակէ, ինչ-
պէս եղաւ իրապէս իր անխոնջ առաքե-
լութեամբ ու գրական գործերով: Ան՝ մա-
նուկ հասակէն նոգկանք զգալով հեթանոս
կրօնքէն ու հմայուած Քրիստոսի սուրբ եւ
լուսաւոր հաւատքէն, թողուց ծնողքը,
տունը ու ամէն բան, վաղեց քաղաքին ա-
ռաջնորդ Ս. Յակոբ Մծրնացւոյն գիրկը,
որուն խնամքներով եղաւ ամենաջերմ
քրիստոնեայ մը: Ի բնէ նիհար, վտիտ ու
տկարակաղմ, դոհ կ'ըլլար կտոր մը դա-
րեհաց ու քիչ մը բանջարեղէն կամ ընդե-
ղէն ուտելով, սոսկ ջուր խմելով ու հա-

ղիւ քանի մը ժամ հանգչելով գիշերը գետ-
նախշտի: Կարելի է երեւակայել թէ ի՞նչ
դարձաւ, երբ տարիքն առած գործի ըս-
կըսաւ, աւելի եւս խոտացնելով օրէ օր իր
ճղնութիւնները: Դէմքը չափազանց լուրջ,
գունաթափ, անծիծաղ, գլուխը ճաղատ ու
անմօրուս, ցնցոտի գրգռելով մը փաթա-
թած մարմինը: Այսպէս կը ներկայացնէ
զինքը իր կենսագիրը: Եւ սակայն, այն
ազադուն մարմնոյն մէջ ի՞նչ կորովի հոգի
մը կար, ի՞նչ մեծախոհ միտք մը, ի՞նչ
գիւցաղնական սիրտ մը: Ան ապրեցաւ ու
գործեց քաղաքական ու կրօնական փոթոր-
կալից չըջանի մը մէջ, երբ իր ծննդավայր
Մծրին քաղաքը, գրեթէ սահմանակից
պարսիկ աշխարհին, յաճախ ենթակայ Սա-
սանեան արքայից յարձակումներուն ու
խոթոթութեանց, երկու անգամ (338 ու
346 տարիներուն) պաշարուեցաւ Շապուհ
Բ. արքային անհամար զօրքերէն, եւ միայն
Ս. Եփրեմին աղօթքն եղաւ՝ որ ազատեց
Մծրին քաղաքը քարուքանդ ըլլալէն, եւ
չարաչար պարտութիւն կրելով պարսիկ
բանակը՝ ձգեց ու փախաւ կորակոր: Եր-
բայեք անգամ ալ (363ին) պաշարուեցաւ
Մծրին, բայց Բիւզանդիոնի թոյլ կայսրը
Յովիանոս՝ պարսիկներուն յանձնեց քա-
ղաքը եւ հաշտութիւն կնքեց: Այդ առթիւ
է որ Ս. Եփրեմ եւ իրեն հետ շատ ասորի
նշանաւոր գրիչներ՝ ձգեցին իրենց հայրե-
նիքը ու Եդեսիա փոխադրուեցան, ուր
հիմնեցին աստուածաբանական բարձր ու-
սումնարան մը՝ Վարժարան Պարսից կոչ-
ուած, ուսկից ելան խումբ մը անուանի
եկեղեցական գրիչներ, որոնք ասորի գրա-
կանութիւնը ծաղկեցուցին: Տասը տարի

